

ՀԱՂՋՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ա. Ա. Ս. Բրահամյան

ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲԱՅԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԵՐԵՎՈՒՅՑՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հանրահայտ իրողությունն է, որ լեզուն ուրիշ լեզուներից անհրաժեշտաբար բառական փոխառություններ կատարելով սեփականում է դրանք և դնում իր ներքին օրենքների տրամադրության տակ, քերականական ու բառակազմական փոփոխությունների ժամանակ նրանց հետ վարվում է ինչպես իր սեփական բառերի հետ:

Այս ընդհանուր օրինաչափությունը բացառություն չի կազմում նաև բայակազմական երևույթների ծավալման ժամանակ: Ունենք հնից եկող բազմաթիվ բայեր, որոնք դեռ մեր հին զրական լեզվում կազմվել էին հին փոխառություններից, ինչպես՝ աշակերտ—աշակերտել, ազդ—ազդել, զորհ—զորհել, դարման—դարմանել, ծանր—ծանրանալ, ծանրել, ծրար—ծրարել, անուշ(<անուշ)—անուշանալ, արժան—արժանանալ, երիտասարդ—երիտասարդանալ, պատերազմ—պատերազմել, պարարտ—պարարտանալ, վիշտ—վշտանալ և այլն: Ունենք և նոր զրական լեզվում կատարված փոխառություններ ու դրանցից մասնիկավորված բայեր, ինչպես՝ ակտիվ—ակտիվանալ, բետոն—բետոնել, բյուրոկրատ—բյուրոկրատանալ, մոնտաժ—մոնտաժել, պոմպ—պոմպել, պասսիվ—պասսիվանալ, ռեկլամ—ռեկլամել, սարտաժ—սարտաժել, սինթեզ—սինթեզել, ցեմենտ—ցեմենտել և այլն: Կան նաև համապատասխան անվանական բառեր, որոնք մեր լեզվում իբրև փոխառություններ, և դրանց դիմաց էլ ունենք հայերենին հատուկ բայակազմական մասնիկներով մասնիկավորված բայեր, ուստի պարզ է, որ վերջիններս անվերապահորեն մասնիկավորված պետք է համարենք առաջիններից: Սակայն արտաքինապես պարզ թվացող այս երևույթը երբեմն ուղեկցվում է նաև այլ երևույթներով, որոնց կանգնադրանքն ստորև: Դրանց անցնելուց առաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք հայերենում հնարավոր են բայական փոխառություններ:

Պրոֆ. Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ը ընդգրկված արմատների ու բառերի բառարանական ցանկում ունի 50 բայ, որոնք ներկայացված են փոխառության նշումով: Դրանցից բոլորը ժամանակակից զրական հայերենում գործածություն չունեն: Ժամանակակից արևելյան զրական հայերենին անցած և այժմ էլ գործածության մեջ եղող այդ կարգի բայերն են՝ արժել (արժենալ), բազմել, իշխել, կողպել, հրամայել, մարսել, հիշել (չիշել), պաշտել, սափրել, սրսկել, փրկել, բարբառային են՝ ապսպրել (ապսպարել), թարկել, չոքել, սազել, սղկել, իսկ մնացածները գործածությունից դուրս են ռնկել:

Այստեղ մեզ հետաքրքրում են ժամանակակից գրական լեզվում գործածվող բայերը, որոնց վրա էլ պիտի կանգ առնենք:

Ընդունել, թե այդպիսի բայերը ամբողջական բառակազմի փոխառություններ են մեր լեզվում՝ սխալ կլինի, և բառարանի երախտավոր հեղինակն էլ, անշուշտ, առաջնությունը տվել է սրանց արմատներին, իբրև փոխառությունների, թեև որպես բառարանային ստուգաբանվող գլխաբաներ դրել է ամբողջական բառաձևերը:

Այստեղ մենք գործ ունենք բուն հայկական բայական մասնիկավորման հետ, որը տվել է ամբողջական բայական ձևեր, իսկ հայերենի բայական մասնիկավորումը իբրև քերականական-բայակազմական մի ընդհանուր երևույթ հայերենի համար՝ իր յուրահատուկ գրսեղորումներով, չէր կարող տառացիորեն նույնանալ սովորական փոխառություն հետ: Այս մասին ե ոչ մի մասնագետ չի կարող հակառակը պնդել: Նշելով այս՝ անհրաժեշտ է եղած փաստերով ու ստուգաբանական տվյալներով ընդհանրացնել ու ցույց տալ այդ հետաքրքրական երևույթի յուրահատկությունը:

Ուրիշ լեզուներից փոխառված ամբողջական բառույթներից հայերենի մեջ մասնիկավորումով բայակազմական ընդհանուր երևույթի հետ լինում են նաև այնպիսի դեպքեր, երբ լեզուն ըստ անհրաժեշտության ստիպված է լինում փոխ առնել փոխատու լեզվի բայական բառույթը և հայկական հոդի վրա գործածել բայական խոսքի մասային նշանակությունը: Սակայն լեզվաբանական գիտությունը պարզված՝ լեզուների քերականական կառուցվածքների առնչակցումների ընթացքում քերականական կառուցվածքային տարրերի փոխառությունների անհնարինություն հաստատուն օրինաչափությունը այստեղ ևս երեւում է գալիս, և, բնականաբար, բայական-քերականական ձևերը նույնությամբ չեն փոխառվում: Մնում է փոխ առնել փոխատու լեզվի համապատասխան բայական բառույթը՝ հայերենում բայակազմական-քերականական ձևավորման ենթարկելով: Նշանակում է՝ այսպիսի դեպքերում փոխ է առնվում ոչ թե փոխատու լեզվի ամբողջական բայական բառույթը իր հատուկ քերականական կազմությամբ, այլ՝ բայական հիմնական ձևույթը իր իմաստով և հայերենում ձևավորվում է հայերենին հատուկ մասնիկավորումով: Սա կարելի է համարել վերակազմական փոխառություն կամ լեզվական-քերականական փոխակարգում:

Այստեղ մենք չենք շոշափում փոխառության հարցն ընդհանրապես կամ էլ այնպիսի դեպքերը, երբ փոխառվող բայը վերցվում է ոչ որպես բայ, այլ որպես այդ իմաստի հետ կապված, բայց խոսքի մասային միանգամայն տարրեր նշանակություն ունեցող բառ, ինչպես օրինակ, մեր օրերում լայն կիրառություն ունեցող կինո գոյականը հայտնի նշանակությամբ փոխառվել է ուսսերներից, բայց դա էլ գալիս է հունարենից. հունարենում κινῶ (հին κινῆω)¹ բայական խոնարհված ձև է՝ ջարժում եմ՝ նշանակությամբ (ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմք), որն իբրև փոխառվող բառ երբեք չի գիտակցվում բայական արժեքով և այն էլ որպես խոնարհված ձև. նույնը կարելի է ասել նաև վետո փոխառվող բառի մասին, որը գալիս է լատինի-

¹ Հմտ. *Новогреческо-русский словарь*, сост. А. А. Иоаннидис, Москва, 1950, էջ 359, *Древнегреческо-русский словарь*, сост. И. Х. Дворецкий, Москва, 1958, т. 1, էջ 949:

լենից, որտեղ խոնարհված ձև լինելով (veto) նշանակում էր «արգելում եմ»²:

Վերոհիշյալ հարցի համար մենք նկատի չունենք այսօրինակ գեպքերը, այլ աֆնախի երևույթը, երբ լեզուն համապատասխան պահանջի հիման վրա վերցնում է ուրիշ լեզվի բայը և դործածում է բայական նշանակությամբ. այս գեպքում փոխատու լեզվի բայական բառույթի հիմնական ձևույթը և բայական նշանակությունը հանդես է բերում ոչ թե օտար, այլ իրեն հատուկ բայկաղամական միջոցներով: Փոխառության այս յուրահատուկ երևույթը, որ համապատասխան բառաձևերում զուգակցվում է հայերենի բայկաղամական մասնիկավորմանը, իր արդյունքն է տվել վերոհիշյալ բայերի մեջ, որոնցից, ինչպես նշվեց, ժամանակակից գրական հայերենում գործածություն ունեն մի քանիսը: Դրանց պատկերը պարզ է դառնում գոյություն ունեցող ստուգաբանական տվյալներով, որոնք ամփոփված են ՇՀայերէն արմատական բառարան»-ում: Հարցի լուսարանման և հիմնավորման նըպատակով հիշենք դրանք ժամանակակից գրական հայերենում գործածություն ունեցող այդ կարգի բայերի համար: Այսպես, արժել փոխառություն է պահլավերենից. մատնացույց է արվում պահլավական arzitan «արժել» բայը, որը կա և պարսկերենում՝ arzīdan, իսկ արմատի համար հիշվում է պահլավական arz ռեհն, արժեք, արժանիք», կան նաև իրանյան այլ բառեր³: Բայը հայերենում վիայված է մեսրոպյան շրջանից, սրանից է կազմված արժեք գոյականը: Հասկանալի է, որ փոխառության համար նկատի է առնվել պահլավական բայական բառույթը, որը հայերենում ձևափոխվել է ըստ հայերենի մասնիկավորման: Իշխել իրանյան xšī «իշխել» ձևից. զենդական xšī «իշխել, տիրել, գորել, կարողանալ» և այլն⁴: Հիամայել փոխառյալ է ֆրամայե րաուից անկախ. ծագում է պահլավական framay-ձևից, որն արտահայտվել է framāyem «հրամայեմ», framutan «հրամայել» բայական ձևերում. նշվում է նաև framayišn «հրամայում» բայանունը և այլն⁵: Մարսել ծագում է ասորական mēras «ճմլել, ճգմել, ջարդել, փափկացնել» բայից⁶: Պաշտել բային նախորդել է *պաշտել ձևը: Արմատի համար մատնացույց է արվում իրանյան *parišta ձևը, կազմված է pari մասնիկով šta արմատից և բուն նշանակում է «շուրջ կանգնել». սրանից է առաջացած պահլավական parastatan «պաշտել» բայը և այլն⁷: Մափրել ծագած է համարվում ասորական sappar «ածիլեց», sepōra «մազերը խուզող», sūpora «մազերը խուզելը» բառերից⁸: Սրսկել հին հայերենում ուներ «ցրցնքել» ցանկել, ցողել» իմաստները. ժամանակակից հայերենում ձևոք է բերել նաև «ներարկել» իմաստը. ծագած է համարվում իրանյան *srisk ենթադրյալ ձևից, որի համար մատնացույց են արվում զենդական srask-«կաթկթել, ցողել, ցրցնքել, կաթիլ-կաթիլ սրսկել», պահլավական srixl «կաթկթել», կան և անվանական ձևեր՝ «կաթիլ», «լաց, արտասուք» իմաստներով⁹: Փրկել ծագում է ասորական pēraq

² Հմմտ. «Латинско-русский словарь», сост. И. Х. Дворецкий и проф. Д. Н. Корольков, Москва, 1949, էջ 927;

³ Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հատ. 1-ին, էջ 679:

⁴ Նույն տեղ, հատոր 3-րդ, 99 94.

⁵ Նույն տեղ, հատոր 4, էջ 421:

⁶ Նույն տեղ, էջ 931:

⁷ Նույն տեղ, հատոր 5, էջ 839:

⁸ Նույն տեղ, հատոր 6, էջ 152—159:

⁹ Նույն տեղ, հատոր 6, էջ 483:

«փրկեց, ազատեց» բայից. կան նաև նույն արմատից անվանական բառեր. բայական նշանակության համար ընդհանուր սեմական արմատից հիշատակվում են երբայական *fereq* «ազատել», եթովպական *feraq* «ազատել» բայերը¹⁰:

Ըստ ծագումնաբանական այս տվյալների հաստատու հիմնավոր է դառնում հիշյալ բայերի բայական ծագումը: Մական դրությունը մի փոքր այլ է ժամանակակից հայերենում նույնպես գործածվող բազմել, կողպել, հիշել (չիշել) բայերի համար: Ինչպես տեսնում ենք, բայի արմատը առանձին ավանդված չէ հայերենում, զրաբարում այն եղել է բազմել (բազմիմ) բայի և մի քանի այլ բաղադրությունների մեջ (բազմակամ, բազմակամակից և այլն): Բայը ծագած է համարվում պահլավական *bazm* բառից, որը, սակայն, ավանդված չէ. պարսկերեն *bazm* բառն ունի «հացկերույթ, խնջույք» իմաստը, կան և այլ իմաստով անվանական բառեր, աֆղանական *bazni* բառը ևս անվանական է՝ «հավաքույթ» նշանակությամբ: Բայական նշանակության միակ հենարանը պետք է ընդունել Հորնր բացատրությունը, ըստ որի բառը կապվում է սանսկրիտի *bhañ* «հրճվել, վայելել» բառի հետ¹¹: Կողպել բայը փոխառյալ է համարվում արաբերենի *quil* «փականք, կողպեք» արմատից¹²: Հիշել բայը ենթադրվում է պահլավական գավառական մի ձևից, որը ավանդված չէ, կապ ունի ուշ, յուշ արմատի հետ¹³, որ իբրանյան է, և հայտնի ձևերը անվանական նշանակություն ունեն:

Մրանց և սրանց նման ուրիշների ծագումնաբանական անհամապատասխան կամ ոչ հաստատուն տվյալները, սակայն, չեն կարող խանգարիչ լինել նկատված օրինաչափության բացահայտման համար, քանի որ տվյալ դեպքում քանակը չէ կարևորը, այլ այն, որ վերը բերված ստուգաբանական տվյալներով ժամանակակից գրական հայերենում գործածվող մի քանի բայեր, որոնք փոխառյալ հիմնական ձևով թվում են իրենց կազմության մեջ, մեզ ներկայանում են իբրև համապատասխան համարժեք բառակազմության՝ փոխառու լեզուների բայական բառակազմության գիմաց: Ինչպես այդ համարժեքները հայերենում արտահայտվել են նրան հատուկ բայական մասնիկներով: Փոխառյալ բայը վերցվել է առանց թարգմանության, բայց նրա բայական մասնիկի փոխարեն դրվել է հայերեն բայական մասնիկը. իհարկե, կատարվել են նաև հնչյունական և իմաստային որոշ փոփոխություններ, որոնք տվյալ դեպքում որոշող նշանակություն չունեն:

Բացի հնից ավանդված այս կարգի բայական բառակազմություններից և հնում փոխառված ոչ բայական բառակազմություններից հայերենում կազմված բայերից, ժամանակակից հայերենում, ինչպես նշվել է, գոյություն ունեն նաև նոր փոխառություններով կազմված բայեր: Այդ փոխառությունները ինչպիսի ծագում էլ ունենան և որ լեզուներից էլ լինեն, արդի շրջանում հիմնականում կատարվում են ուսերենից: Այս շրջանում էլ գործում է ընդհանուր օրինաչափությունը, այսինքն փոխառյալ ոչ բայական բառերից հայերենի մասնիկավորման միջոցներով կազմվում են բայեր, որը կատարվում է փոխառությունները լեզվի կողմից սեփականվելուց հետո:

¹⁰ Նույն տեղ, էջ 1328:

¹¹ Նույն տեղ, հատոր 1, էջ 862:

¹² Նույն տեղ, հատոր 3, էջ 1299—1300:

¹³ Նույն տեղ, հատոր 4, էջ 1297:

Այս այսպես է, եթե փոխառությունը ոչ բայական միավոր է, և նրան զուգահեռ չկա փոխառվող բայական ձև, որ վերջինիս համար հայերենի մասնիկավորումով ստեղծվի բայական համարժեք բառույթ հայերենի մեջ: Բայց հարցը այլ բնույթ է կրում, երբ փոխառվող ոչ բայական բառույթին զուգահեռ կա նույնպես փոխառության ենթակա զուգահեռ բայական բառույթ, որի համար պետք է ստեղծվի համարժեք բայական ձև՝ առանց, սակայն, բառի «նյութական» մասի թարգմանություն: Նման դեպքերում հայերենում բայական ձևի արտահայտումը դառնում է անհրաժեշտ պահանջ, քանի որ ուսանողներում ոչ բայական բառույթին զուգահեռ բառական բառույթը, որ նրա հետ ենթակա է փոխառման, պետք է արտացոլում գտնի փոխառու լինվում: Այսպիսի զուգահեռությունների պայմաններում սխալ կլինե՞ր կարծել, թե հայերենում կատարվող մասնիկավորման մեջ բայերը դեր չունեն: Նրանք հենարան և նախագաղափար են հանդիսանում հայերենում համապատասխան բայերի ձևավորման համար: Այսպիսով փոխառման ենթակա ոչ բայական բառույթները և նրանց հետ ընդհանուր հիմք ունեցող բայերը իրենց դերով բայական մասնիկավորման մեջ համատեղվում են: Իսկ եթե կա միայն բայական բառույթը առանց անվանական կամ այլ զուգահեռի, պարզ է, որ փոխառության դեպքում այն պետք է ենթարկվի ձևափոխության՝ ըստ հայերենի բայական մասնիկավորման օրենքների:

Բայց լինում են դեպքեր էլ, երբ բայական և անվանական փոխառման ենթակա զուգահեռությունների մեջ հայերենում բայական բառույթի ձևավորումը կատարվում է փոխառվող բայական բառույթի հիման վրա: Երբեմն հնարավոր է լինում հստակորեն որոշել փոխառվող անվանական և բայական զուգահեռների մեջ վերջիններիս կազմության հանգամանքները: Այդ ցույց տալու համար վերցնենք մի քանի օրինակներ: Ռուսերենից փոխառված ունենք ցիտատ գոյականը (ռուսերենում՝ цитата, սա էլ ծագումով գալիս է լատիներենից¹⁴), դրան զուգահեռ ունենք նաև ցիտել բայը, որը, անշուշտ, կազմված է ուսանողների цитировать բայի օրինակով, սակայն առանց հիմնական մասի թարգմանության: Իրանք, իհարկե, իմաստային տեսակետից հայերենում սերտորեն կապված են միմյանց հետ, բայց երբեք էլ չի կարելի պնդել, թե հայերենում ցիտել բայը կազմված է ցիտատ գոյականի փոխառումից հետո և անմիջականորեն մասնիկավորված է նրանից. այս դեպքում մենք կունենայինք ոչ թե ցիտել, այլ ցիտատել, որպիսին իրականում չկա: Պարզ է, որ այս բայը մեր լեզվում կազմվել է ցիտատ գոյականի փոխառությունից անկախ՝ ուսանողների համապատասխան բայի հիման վրա: Իսկ քանի որ մեր լեզվի մեջ կան այդ զուգահեռները իբրև ուրույն բառական միավորներ, որոնց արմատն ընդհանուր է, ուստի ցիտատ գոյականը իր հերթին իմաստային հենարան է հանդիսանում բայի համար, թեև անմիջականորեն չի ընկել նրա կազմության հիմքում: Կամ ունենք պրոպագանդա և պրոպագանդել: Հասկանալի է, որ բայը անմիջականորեն չի կազմված գոյականից, այլապես հայերենում պետք է լինե՞ր պրոպագանդայել, որպիսին չկա: Դոյականը փոխառված է ուսանողների միջոցով առանց փոփոխության (ծագում է լատիներենից), իսկ բայը կազմված է пропагандировать բայի օրինակով՝ հայերեն մասնիկավորումով: Այլ են,

¹⁴ «Словарь иностранных слов» под ред. И. В. Лехина и проф. Ф. Н. Петрова, Москва, 1949, էջ 725.

սակայն, հետևյալ օրինակները: Հիպնոս, մոնում, սաբոտաժ բառերը մեր լեզվում գործածվում են իբրև փոխառություններ. դրանցից կազմված ունենք հիպնոսել, մոնումել, սաբոտաժել բայերը: Ռուսերենում гипноз (<հուն. ὑπνο-), монтаж (<ֆրանս. montage), саботаж (ֆրանս. sabotage) գոյական անուններին զուգահեռ կան այլ հիմունքներով կազմված բայեր, гипнотизировать (<ֆրանսերենի hypnotiser բայից, հունական ծագումով¹⁵), монтировать (<ֆրանս. monter¹⁶), саботировать (<ֆրանս. saboter¹⁷):

Այս զուգահեռ բառույթները համապատասխան զույգերով իրենց հիմնական ձևերով ընդհանուր են, բայց կազմության հիմունքների մեջ ունեն տարբերություններ: Պարզ երևում է, որ այստեղ բայական ձևերի մեջ անվանական ձևերը տեղադրված չեն առանց ձևափոխման:

Սակայն սխալ կլիներ միակողմանիորեն պնդել, թե հայերենի հիշյալ բայական ձևերի մեջ դեր են խաղացել միայն համապատասխան անվանական ձևերը: Ինչպես նշեցինք, հայերենում դրանք մասնիկավորված են փոխառյալ անվանական ձևերից, բայց բայական ձևերը ևս այստեղ դեր ունեն: Իսկ ո՞րն է այդ դերը: Դա այն է, որ նախ՝ ռուսերենում անվանական ձևերի հետ բայական ձևերի գոյությունը համապատասխան իմաստների արտահայտման հիման վրա առաջ է բերում հայերեն լեզվում նույնպիսի բայերի գործածության պահանջ, և ապա՝ դրանք իմաստային հենարան են լինում հայերենի բայական ձևերի (փոխառյալ հիմունքով) կազմության համար, թեև հայերենում բայերը նրանց անմիջական կաղապարով չեն ձևավորվում:

Բայց ավելի հաճախ են հանդիպում այս տիպի բայերից այնպիսիները, որոնք ըստ ձևի ու կազմության անմիջականորեն կապվում են մի կողմից փոխառյալ անվանական բառույթների, մյուս կողմից՝ բայերի հետ, ինչպես՝ բետոն—բետոնել (бетон—бетонировать), գիպս—գիպսել (гипс—гипсовать), ասֆալտ—ասֆալտել (асфальт—асфальтировать), բոյկոտ—բոյկոտել (бойкот—бойкотировать), բուքսիր—բուքսիրել (буксир—буксировать), մանևր—մանևրել (маневр—маневрировать), սինթեզ—սինթեզել (синтез—синтезировать) և այլն:

Այստեղ բայական մասնիկավորումը անվանական փոխառյալ բառույթներից անմիջական է: Սակայն դրանք միաժամանակ հենարան ունեն փոխառման ենթակա բայերի մեջ, որոնք իրենց հերթին նպաստում են հայերենի մեջ բայական այսպիսի մասնիկավորմանը:

Հայերենի բայական բառապաշարի հարստացման տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես այն բայերի կազմությունը, որոնք մասնիկավորվում ու ձևավորվում են փոխառման ենթակա բայերի հիման վրա, նրանց օրինակով, միաժամանակ հենարան ունենալով այդպիսի բառերի անվանական զուգահեռների մեջ: Լեզվի մեջ զգալի արդյունքներ են տալիս նոր և նորագույն փոխառությունների հետ կապված այսպիսի երևույթները: Անշուշտ, այս հանգամանքն է նկատի ունեցել պրոֆ. Գ Սևակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով 1943 թվին Տերմինաբանական կոմիտեի

¹⁵ „Словарь иностранных слов“, էջ 165:

¹⁶ Նույն տեղ, էջ 425:

¹⁷ Նույն տեղ, էջ 573:

որոշմամբ գործածության համար ընդունված յոթ բայերի (էվակուացնել, կոմբինացնել, մորիլիզացնել, օկուպացնել, մոտորացնել, նորմալավորել, նորմալացնել) և նրանց հետ կապված բայափոխառման բառակազմական երևույթի վրա¹⁸։ Նա դրանցից երեքը համարում է սովորական բառակազմություններ մոտոր և նորմալ փոխառություններից՝ մոտորացնել, նորմալավորել, նորմալացնել, բայց իրեն հատուկ կազմություններ ընդունելով մյուսները՝ էվակուացնել, կոմբինացնել, մորիլիզացնել, օկուպացնել, ընդգծում է, որ դրանք հանդես են բերում բայափոխառության նոր երևույթ մեր լեզվում։ Այս բայերն իրենց հիմնական մասով առնված են ռուսերենի միջոցով և շատ բնորոշ են տարբեր լեզուների մեջ ընդհանուր գործածություն գտնող բառապաշարի համար։ Քանի որ նոր և նորագույն փոխառյալ բառերը և այդ թվում փոխառյալ հիմք ունեցող հատուկ բայական կազմությունների համար հենարան հանդիսացող բայերը անկախ ծագումից ուղղակի փոխ են առնվում կամ ընդօրինակման նախատիպ են լինում ռուսաց լեզվից, ուստի հայերենում մեզ հետաքրքրող այդպիսի բայական միավորների կազմության ու արտահայտման հանգամանքների հետ կապված խնդիրները ուսումնասիրելու տեսակետից պետք է հիշել, թե դրանք ինչպիսի՝ դրսևորումներ ունեն ռուսերենում։ Այստեղ այս կարգի բայերը (և ոչ միայն այս կարգի) չեն կարող լինել առանց ռուսերենին հատուկ բայացնող մասնիկի (ТЬ), իսկ սրա հետ կապակցվում են զանազան ածանցներ։ Քննարկվող բայերը հիմնականում խմբավորվում են -ОВА-(ТЬ) ածանցի և նրա տարբերակների՝ -ирова-, -изирова-, -изова- ածանցների շուրջը (այստեղ խոսքը չի վերաբերում ռուսերենի բայականական բոլոր ածանցներին ընդհանրապես, որոնք բավական շատ են)։ Այս ածանցները իրենց բայականական դերով ու քերականական իմաստներով գրավել են ռուսագետ լեզվաբանների ուշադրությունը։ Դրանց ուսումնասիրությունը հատուկ տեղ է տվել և խիստ արժեքավոր հետևություններ է արել ակադ. Վ. Վ. Վինոգրադովը¹⁹, դրանց անդրադարձել է պրոֆ. Պ. Ս. Կուզնեցովը (հատկապես -ировать ածանցին)²⁰, այդ ածանցների բայականական դերին ու դրանցով կազմվող բայերի իմաստային առանձնահատկություններին առանձին ուսումնասիրություն է նվիրել Ի. Ս. Ավիլովան²¹։ Մրանցից -ОВА- ածանցը, որ եղել է հին սլավոնական լեզվում ու հին ռուսերենում, ըստ ակադ. Վ. Վ. Վինոգրադովի՝ ռուսերենում իր ֆունկցիաներն ընդլայնեց 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին լեհերենի ազդեցության տակ, իսկ 19-րդ դարում գերմանական -ieren-, -isieren- ածանցների ազդեցությամբ երևան եկան այդ ածանցի -изировать-, -ировать բաղադրական տարրերակները, իսկ -овать-, -изировать ածանցներից էլ ծագում է -изовать տարրերակը։ Այստեղ և՛ ածանցական տարրի ազդեցությամբ գերմաներենի համար ֆրանսերեն

¹⁸ Տե՛ս Գ. Սևակ, «Նայոց լեզվի զարգացման սովետական փուլը», Երևան, 1946 թ., էջ 18—19, այլև՝ «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», Երևան, 1955 թ., էջ 140—141։

¹⁹ Б. В. Виноградов, Русский язык, грамматическое учение о слове М—Л., 1947, էջ 435։

²⁰ «Современный русский язык, морфология» (курс лекций), изд. Московского университета, Москва, 1952, էջ 263։

²¹ И. С. Авилова, Глаголы с суффиксом -ова- и его вариантами -ирова-, -изирова-, изова- в русском языке.

է եղել (ինչպես venir), իսկ սա էլ հանգում է լատիներենի ire դերբայական մասնիկի (4-րդ լծորդության մեջ)²²: Այս ածանցներով ուսուներևում բայեր են կազմվում հիմնականում փոխառյալ անվանական և բայական հիմքերից (атаковать, балезамировать, бронировать, конкретизировать, рекомендовать, стабилизировать, автоматизировать, локализовать, организовать և շատ ուրիշները), բայց և կարող են բայեր կազմվել բուն ուսուներև բառերից՝ անվանական -изация, -изатор ածանցների գործածության կապակցությամբ (военизировать, коренизировать, озимизировать, яровизировать և այլն): Նկատված են նաև դրանց մեջ որոշ փոխարկումներ բուն ուսական -ить ածանցով, ինչպես՝ бомбардировать և бомбить: Ակադ. Վինոգրադովը միանգամայն ճիշտ է վարվում, երբ հիշյալ -овать (-овать, -евать) ածանցի մատնացույց արված տարբերակները համարում է կիսափոխառյալ ածանցներ, քանի որ նրանց փոխառյալ տարբերի գործածությունը բայակազմության մեջ անհնարին է ոչ միայն առանց բայացնող -ТЬ մասնիկի, այլև առանց -ОВА-(-ева-) ածանցի²³. Այս հանգամանքը չափազանց կարևոր է այսպես կոչված փոխառյալ բայերի էություն ու բնույթի ըմբռնման և գնահատման տեսակետից: Դա հանգեցնում է այն հետևություն, որ ուսուներևում փոխառյալ հիմքով որևէ բայի կազմությունը ինչ հիմունքով էլ լինի՝ կատարվում է ուսուներևին բնորոշ մասնիկավորումով, որը սոսկ օտար ածանցով չի կարող փոխառվել, այն պետք է անցնի ուսուներևի մասնիկավորման բովով՝ կրելով ուսուներևի քերականական կառուցվածքի ինքնատիպ կնիքը:

Վերը տեսանք, որ նոր և նորագույն փոխառությունների մեջ հայերենում բայեր են կազմվում ինչպես փոխառյալ անվանական, այնպես էլ բայական հիմքերից, բայց և սրանց հետ այսպիսի բայակազմության մեջ լինում են նաև իմաստային ու ձևային զուգակցումներ: Այժմ տեսնենք, թե դրանք ինչպե՞ս են արտահայտվում հայերենում:

Նկատելի է, որ այսպիսի բայակազմության մեջ շատ գործուն ու տարածված է -ել մասնիկը, սոսկ -ալ մասնիկով կազմություններ գրեթե չկան, իսկ -անալ խմբով կազմությունները համեմատաբար քիչ են: Այս խմբով բայեր են կազմվում հատկապես փոխառյալ ածականներից, ինչպես՝ ակտիվանալ, բյուրոկրատանալ, նորմալանալ, պասսիվանալ և այլն:

Վերը բերված -ել մասնիկով կազմված օրինակներում կարելի է տեսնել, որ -ել մասնիկը բայական կազմության մեջ անվանական հիմքերի հետ (նաև համապատասխան բայերի իմաստային հենարանով) բայակազմական դերը կատարում է մենակ, առանց ուրիշ ածանցի զուգակցման (ասֆալտել, բետոնել, ցեմենտել, մոնտաժել և այլն), այդպես է մասամբ բայական հիմքերով կազմված ձևերում, ինչպես՝ աբստրահել, ցիտել, պրոպագանդել, դիֆերենցել: Այստեղ էլ աչքի է զարնում -ել մասնիկի բայակազմական հիմնական ու կարևոր դերը: Սակայն նորագույն փոխառությունների մեջ բայակազմության գործում այս մասնիկին զուգակցվում են նաև այլ մասնիկներ, որոնց համա-

²² „Современный русский язык, морфология“ (курс лекций), изд. Московского университета, Москва, 1952, էջ 264:

²³ В. В. Виноградов, Русский язык, грамматическое учение о слове, М.—Л., 1947, էջ 435, „Современный русский язык“ (курс лекций), изд. Московского университета, Москва, 1952, էջ 264:

դրումը բայակազմական որոշ պայմաններում դառնում է անհրաժեշտություն: Այստեղ էլ գլխավոր դերը պատկանում է -ել մասնիկին, սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ այս մասնիկը լրիվ չափով չի արտահայտում ձևավորվող բայական բառույթի յուրահատուկ իմաստը, և սրան օգնություն են դալիս այլ մասնիկներ: Այստեղ մենք հատկապես նկատի ունենք -ցն և -(ա)լոր ածանցները: Այսպիսի բայակազմության մեջ իբրև յուրահատուկ կողմ պետք է հաշվի առնել այս մասնիկների դերը բայական բառույթ կազմելու տեսակետից և ոչ թե առաջինի սովորական պատճառական իմաստի արտահայտումը և երկրորդի ընդհանուր բառակազմական նշանակությունը:

Որոշ խմբի բայերի մեջ -ցն ածանցը (սովորաբար՝ հիմնային ա ձայնավորի հետ) կցվում է -ել մասնիկին և նրա հետ դառնում է բայական մասնիկավորման անբաժան տարր, որտեղ հիմնականը ոչ թե պատճառական դադարի արտահայտումն է, այլ՝ բայական բառույթի կազմումը, ինչպես՝ կոոպերացնել, կոորդինացնել, լիկվիդացնել, մորբիլիզացնել, էվակուացնել, կոմբինացնել, օկուպացնել: Անժխտելի է, որ սրանց մեջ յուրահատուկ ձևավորում են ստացել кооперировать, координировать, ликвидировать, мобилизовать, комбинировать, оккупировать, эвакуировать բայերը: Այդ բայերի հետ մեր լեզուն ունի նաև անվանական ձևերի փոխառություններ ինչպես՝ կոոպերացիա, կոորդինացիա, լիկվիդացիա, մորբիլիզացիա, կոմբինացիա, օկուպացիա, էվակուացիա:

Պարելի է ընդունել, որ հայերենում մատնանշված բայերի մեջ բայակազմական-ացնել խմբից աց տարրը հնչյունական տեսակետից համընկնելով համապատասխան անվանական բառույթների -ացիա ածանցի համանման մասին՝ հենարան է գտնում նրա վրա և այսպիսով շատ ավելի սերտ է դարձնում բայերի կապը անվանական ձևերի հետ ոչ միայն նրանց իմաստի, այլև կազմության տեսակետից, այլապես բայերը պիտի լինեին կոոպերել, կոորդինել և այլն, որպիսիք իրականում չկան: Այս հանգամանքը շատ ավելի ցայտուն է երևում փոխառյալ -(լ)ֆիկացիա ածանց ունեցող անունների և համապատասխան բայերի հարաբերակցության մեջ, ինչպես՝ դազիֆիկացնել, էլեկտրիֆիկացնել, ռադիոֆիկացնել և այլն՝ դազիֆիկացիա, էլեկտրիֆիկացիա, ռադիոֆիկացիա անվանական զուգահեռներով: Սրանց հանդեպ իմաստային նուրբ տարբերություն ունեն գազացնել, էլեկտրականացնել, բայերը, որոնք կազմության հիմունքով էլ տարբեր են:

Նորագույն փոխառություններով կազմված ձևերի մեջ այս կարգի բայերը մի յուրահատուկ խումբ են կազմում: Սակայն կան և այնպիսի կազմություններ, որտեղ ածանցի տարրերի այսպիսի անմիջական զուգակցություն չկա, այլ -ացնել խումբը ուղղակի կցվում է փոխառյալ բաղադրիչ հիմնական մասին: Այստեղ նկատի ունենք հատկապես այն բայերը, որոնք ուսերենում ունեն զուգահեռ անվանական ձևեր՝ -изация բաղադրյալ ածանցով: Այդպիսի բայերից են՝ гальванизировать || гальванизовать, կարբոնացնել (карбонизировать), կոլեկտիվացնել (коллективизировать), կոնվեյերացնել (конвейеризировать), պաստյորացնել (пастеризовать)²⁴ և այլն: Սրանց անվանական զուգահեռների -изация ածանցի տարրերի համադրումը հա-

²⁴ Հայերենում կազմվել է նաև պաստյորել բայը, որը, սակայն չի գործածվում: Տե՛ս «Ռուս-հայերեն նոր բառարան», Երևան, 1935, հատ. 2, էջ 236:

լերենի այս բայաձևերի մեջ չկա, բայց այն երբեմնակի երևան է գալիս մի քանի այլ բայերում. ալդպիսին է վերը բերված օրինակներից մոխրիլիզացնել բայը. վերջերս մեր մամուլում երևան եկավ Խիրանիզացնել ձևը (Հմմտ. «Մոսֆիլմ»-ը Խիրանիզացնելու է Ա. Պուշկինի «Կապիտանի աղջիկը», «Երևան», № 37 (102), 22 II 1958 թ.), բայց ինչպես կտեսնենք ստորև, ունենք և դրա մի այլ ձևը, որը ավելի տարածված է:

Հիշյալ բայերի անվանական զուգահեռները մեր լեզվում սովորաբար գործածվում են հիմնային -աց և բայանվանական -ուլ(ն) մասնիկներով, ինչպես՝ գալվանացում, կոլեկտիվացում և այլն:

Սովորական պատճառական բայերն են այնպիսիները, որոնք փոխառյալ հիմնական բաղադրիչով կազմված բայերի մեջ ունեն իրենց համապատասխան անանցողական զուգահեռ ձևերը, ինչպես՝ ակտիվացնել (ակտիվանալ), նորմալացնել (նորմալանալ), բյուրոկրատացնել (բյուրոկրատանալ), պասսիվացնել (պասսիվանալ) և այլն:

Հետաքրքրական իրողություն է փոխառյալ հիմնական բաղադրիչ ունեցող բայերի մեջ -(ա)լոր ածանցի զուգակցումը բայական մասնիկին: Այս ածանցը մեր լեզվում լայն տարածում ունի և գալիս է հայերենի հնագույն շրջանից: Հայտնի է նրա բառակազմական դերը. մեծ մասամբ կազմում է ածականներ, մասամբ էլ գոյականներ: Ալդպիսի ածանց ունեցող բառերից ըստ ընդհանուր օրինաչափության կարող են կազմվել նաև բայեր, ինչպես՝ թեալվոր—թեալորել, լուսավոր—լուսավորել, չափավոր—չափավորել, փառավոր—փառավորել և այլն:

Կազմության հանգամանքներով այս բայերից տարբերվում են այնպիսիները, որոնք անմիջականորեն չեն մասնակավորվում -(ա)լոր ածանց ունեցող պատրաստի բառերից, քանի որ իրականում ալդպիսի ածանցումով համապատասխան բառույթներ չկան, ինչպես՝ պարենավորել, սարքավորել, մանավանդ՝ հացավորել, որը գրական լեզվում գործածություն չունի, բարբառային է (նշ. «Եկերակրել» հմմտ. Յանէն... հացավորեց մշակներին»²⁵), բայց շատ բնորոշ է այս երևույթի համար: Հայերենում չունենք պարսեմավոր, սարքավոր, ինչպես և հացավոր բառական միավորներ (նույնիսկ Ստ. Մալխասյանցի բառարանում չկա մեր գրական լեզվում շատ սովորական դարձած սարքավորել բայը): Չենք խոսում եղած և հնարավոր բայանունների մասին, որոնք բխում են սրանցից: Հետևությունը պարզ է՝ այս բայաձևերում -(ա)լոր ածանցը հարկ է բայական մասնիկին և նրա հետ բալ է կազմել:

Ձի կարելի պնդել, թե այստեղ այս ածանցը բոլորովին զուրկ է ածանցական իմաստից, բայց և դժվար չէ նկատել նրա բայակազմական դերը, որն արտահայտվում է բայական -ել մասնիկին հարելով և սրա հետ միասին բալ կազմելով: Հարկավ, դժվար է անվանական ածանցյալ բառույթների գոյություն պայմաններում առանձնացնել ածանցի այսպիսի դերը, որը հիմնականը չէ հայերենի բայական բառույթների կազմության մեջ ընդհանրապես: Բայց, համենայն դեպս, որոշ ձևերում նկատելի է:

Պետք է ընդգծել, որ ել մասնիկին հարելու և նրա հետ բայեր կազմելու երևույթը ըստ -(ա)լոր ածանցի գործածության՝ վերջին տասնամյակներում մեր լեզվում ավելի որոշակի է դարձել հատկապես փոխառյալ հիմքով կազմ-

²⁵ Ս. Վ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912 թ., էջ 391:

վող բայերի մեջ, ինչպես՝ ավանսավորել, ատեստավորել, վիտամինավորել, դոզավորել, ակտավորել, կոմպլեկտավորել, կոնսպեկտավորել, նորմավորել, էկրանավորել, դիպլոմավորել, ֆինանսավորել և այլն²⁶։ Հանդիպում են նաև զուգահեռ ածանցազուրկ և ածանցավոր ձևեր, ինչպես՝ բրոշյուրել և բրոշյուրավորել, գրիմել և գրիմավորել։ Ծիշտ է, սրանցից մի քանիսը նեղ մասնագիտական բնույթ ունեն, սակայն ընդհանրապես չի կարելի ժխտել նրանց գործածությունը մեր լեզվում։

Համեմատությունը ցույց է տալիս, որ այս տիպի բայերի մեջ հայերենի (-ա)վոր ածանցը գործածվում է թարգմանաբար արտահայտելու փոխառվող բայերի -ова- ածանցի և նրա տարբերակների իմաստները։ Այսպես, այդ ածանցը -ова- ածանցի դիմաց ունենք ատեստավորել (аттестовать), կոմպլեկտավորել (комплектовать) բայերում, -ирова- ածանցի դիմաց՝ ավանսավորել (авансировать, заавансировать), ակտավորել (активировать, заактивировать), գրիմավորել (гримировать), դիպլոմավորել (дипломировать), դոզավորել (дозировать), կոնսպեկտավորել (конспектировать), նորմավորել (нормировать), ֆինանսավորել (финансировать) բայերում, -изи-рова- ածանցի դիմաց՝ վիտամինավորել (витаминизировать) բայի մեջ։ Իսկ լինում են դեպքեր, երբ ուսանողներն հիշյալ ածանցի տարբերակները գործածվում են նույն հիմքից կազմված բայերում, ինչպես՝ экранизировать, экранизовать, экранировать, որոնցից առաջին երկուսը իմաստով նույնն են, իսկ վերջինը որոշ տարբերություն ունի (նշ. «որևէ բան վահանով ծածկել՝ արտաքին ազդեցությունից պաշտպանելու համար»)։²⁷ Հայերենում առաջին երկուսի դիմաց ավելի շատ գործածվում է եկրանավորել ձևը (եկրանիզացնել ձևի մասին վերը նշվել է)։

Ռուսերենում -ова- ածանցը և նրա տարբերակներն ունեն իմաստային զանազան նրբերանգներ։ Դժվար է անվերապահորեն պնդել, թե հայերենի -(ա)վոր ածանցը լրիվ չափով արտահայտում է այդ բոլոր իմաստային նրբերանգները։ Սակայն այդպիսի բալակազմության մեջ հետաքրքրականն այն է, որ հայերենը որոշակի կերպով ձգտում է որոնել միջոցներ իմաստային այդ նրբերանգները որքան կարելի է ճիշտ արտահայտելու համար, և նրա առաջ քաշած միջոցներից մեկը -(ա)վոր ածանցի գործադրումն է։

Այսպիսով՝

1. Հայոց լեզուն փոխառյալ ոչ բալական բառույթներից բայեր է կազմում բալակազմական գործող օրենքներով, ինչպես բնիկ հայերեն բառերից։ Այդ երևույթը շարունակվում է և նրա դարգացման արդի շրջանում։ Սակայն, դրա հետ միասին հայոց լեզուն փոխառման պահանջ է դրում նաև փոխատու լեզուների զանազան բալական բառույթների նկատմամբ։ Իսկ այդ պահանջը լեզվի մեջ երևան է գալիս բալական որոշ իմաստներ արտահայտելու անհրաժեշտությունից։

2. Միշտ չէ, որ մեր լեզվի մեջ փոխատու լեզուների՝ ըստ անհրաժեշտության փոխառման ենթակա բայերի բառական-քերականական նշանակու-

²⁶ Օրինակներն ընտրված են պարբերական մամուլից և վերջին ժամանակներում հրատարակված բառարաններից։

²⁷ СЛ'с «Толковый словарь русского языка» под ред. проф. Д. Н. Ушакова, Москва, 1940, հատ. 4, էջ 1402։

թյունն արտահայտվում է թարգմանաբար, լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող բայերով, այլև պետք է լինում արտահայտել հենց այդ նույն բայերի հիմնական մասի պահպանումով, առանց թարգմանության, բայց և նրա վերականգնումով և հայերեն ձևավորումով:

3. Փոխառյալ հիմնական մասով և հայկական բայակազմական ձևավորումով մի շարք բայեր ունենք հայերենի մեջ մեր լեզվի հին շրջանից, որոնց մի մասը գործածություն ունի նաև ժամանակակից գրական հայերենում: Ստուգաբանական տվյալները վեր են հանում դրանց բայական նշանակությունները փոխառու զանազան լեզուներում (մասնակի բացառություններով): Դրանք փոխադրվել են հայերենի մեջ իրենց հիմնական մասով և բայական ձևավորում են ստացել հատկապես -ել մասնիկով:

4. Հայերենում նորագույն փոխառությունները հիմնականում կատարվում են ուսերենից և ուսերենի միջոցով: Այն բայերը, որոնք արդի շատ լեզուներում մեծ մասամբ ընդհանուր գործածություն ունեն, իրենց հիմնական մասով հայերենին անցնում ու հատուկ ձևավորում են ստանում՝ իբրև բայ ձևավորված լինելով ուսերենում. հայերենը դրանք փոխակարգում է իր բայակազմական օրենքներին համապատասխան:

5. Փոխառությունների մեջ անվանական բառերը հաճախ զուգակցվում են բայերին՝ Դրանցից անմիջականորեն կարող են բայեր կազմվել փոխառու լեզվի համապատասխան բայական բառույթների իմաստային հենարանով, և, ընդհակառակը, բայերը անմիջականորեն կարող են փոխակարգվել՝ համապատասխան փոխառյալ անվանական բառույթների իմաստային, որոշ դեպքերում էլ՝ ձևային հենարանով:

6. Ռուսերենի -ОВА- ածանցով ու նրա զանազան տարբերակներով կազմված այն բայերը, որոնք իրենց հիմնական մասով փոխառվում են, հայերենում փոխակարգվում են զանազան ձևերով. այստեղ կարևոր դեր ունի -ել մասնիկը, որը կարող է անմիջականորեն կցվել փոխառյալ հիմնական մասին՝ գրվելով բայաձանցի և բայացնող մասնիկի փոխարեն: Շատ դեպքերում էլ նրան զուգակցվում են պատճառական -ցն ածանցը ա հիմնային ձայնավորով և -(ա)վոր բառակազմական ածանցը: Դրանց դերն այստեղ բայակազմական է (-ել մասնիկի հետ): Որոշ բայերի մեջ հայերենի -ացնել խմբի աց մասը ըստ ձևի համընկնում և հենարան է գտնում փոխառյալ անվանական բառույթների ածանցական համապատասխան մասի վրա (-իդացիա — իդացնել, -իֆիկացիա — իֆիկացնել), իսկ որոշ բայերի մեջ էլ չկա այդպիսի համընկում: Փոխառվող բայերի փոխակարգման մեջ այս ածանցի հիմնական բայակազմական դերի համեմատությամբ շատ աղոտ է պատճառականության գաղափարը՝ առանց պատճառականազուրկ բայական բառույթների զուգահեռների:

Որոշ օրերում հայոց լեզվում աչքի են ընկնում փոխակարգման այս միջոցները:

7. Փոխառվող բայերի փոխակարգումը լեզվական-քերականական բառակազմության երևույթ է և օրինաչափորեն ենթարկվում է հայոց լեզվի կառուցվածքային օրենքներին:

А. А. Абрамян

Некоторые явления глагольного словообразования, связанные с заимствованиями, в современном армянском языке

Р е з ю м е

Синтетическое словообразование—один из основных способов обогащения количества глагольных лексем современного армянского языка. Для этой цели язык применяет свои собственные глаголообразующие средства и законы. Наиболее распространенным является образование глагольных лексем из именных слов. для чего употребляются глагольные суффиксы *-իլ*, *-ալ* (последний продуктивен в комбинации с суффиксом *-ան* — *-անալ*).

В качестве глагольных основ выступают собственные, а также заимствованные именные слова. Глагольные лексемы продолжают образовываться из новых и новейших заимствованных слов. Таким путем в армянском языке образован ряд глаголов.

Иногда язык нуждается и в заимствовании глагольных лексем других языков. В „Этимологическом словаре армянского языка“ Р. Ачаряна представлены 50 „заимствованных“ глаголов, из которых в современном армянском языке употребляются лишь некоторые.

В наше время для преобразования заимствованных глаголов употребляется преимущественно аффикс *-իլ*, к которому могут примыкаться каузативный аффикс *-ցն*, с основным гласным *ա* (*-ացնիլ*) и суффикс (*-ա*) *որ* (*-աորիլ*). Армянский язык пользуется этими средствами при преобразовании и тех заимствованных глаголов, которые в русском языке распространены с суффиксами *-ова-*, *-изова-*, *-изировать-*, *-ирова-*.

A. A. Abrahamian

Some phenomena of verbal word-building connected with adoptions in contemporary Armenian language.

S u m m a r y

Synthetic word-building is one of principal ways of quantitative enrichment of verbal lexemes in the contemporary Armenian language. The language uses its own means and laws of word-building to that effect. Formation of verbal lexemes of nominal words is the most widespread for what verbal affixes *-իլ*, *-ալ* (the latter is productive in combination with suffix *-ան*, *-անալ*) are used. In the capacity of verbal bases come foreward the own as well as the nominal loan-words. Verbal

lexems continue their making up of new and newest loan words. A number of verbs is made up in Armenian language in this way.

Sometimes the language is also in need to borrow of verbal lexems from other languages. In R. Acharian's Etymological Dictionary of Armenian language 50 „loaned“ verbs are introduced of which only some are in use in the contemporary Armenian language.

Nowadays for transformatin of loan-verbs is mainly used affix *-ել*, to which may join casuative affix *-ցն*, together with the basic vowel *ա(ացնել)* and suffix *(-ա)վոր* (*-ավորել*) Armenian language uses these means also when transforming those loan-verbs, which are spread in Russian language with suffix *-ова-, -изова-, -изирова-, -ирова-*.